ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/08/08

ք.Երևան

19-ը օգոստոսի 2019թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հելիքս Կոնսալտինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա.Մխիթարյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ծավալով Պատվիրատուին մատուցել վերջինիս պատկանող news.1tv.am կայքի (այսուհետ՝ Կայք) լրամշակման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հավանությանը ներկայացնել և վերջինիս հետ գրավոր համաձայնեցնել Կայքի լրամշակվող հատվածի դիզայնը՝ այդ թվում, բայց չսահմանափակվելով, գունային գամման և տրամադրությունը, ոճային լուծումները, տառաչափը, տառատեսակը, մենյուի դասավորվածությունը և այլն:

1.3. Ծառայությունները մատուցվում են մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 3-ը ներառյալ:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2.1. Կողմերն արձանագրում են, որ Կայքի նկատմամբ բոլոր իրավունքները (հեղինակային, գույքային և այլ) պատկանում են Պատվիրատուին:

2.2. Սույն Պայմանագրով Պատվիրատուի ակնկալած արդյունքին հասնելու համար անհրաժեշտ և սույն Պայմանագրով Ծառայությունների մատուցման ընթացքում և/կամ մինչև սույն Պայմանագրի կնքելը Կատարողի կողմից ստեղծված հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ բոլոր իրավունքները պատկանում են Կատարողին: Կողմերն արձանագրում են, որ բոլոր դեպքերում, Պատվիրատուն իրավասու է ցանկացած եղանակով, ժամանակ և ծավալով օգտագործելու հիշյալ իրավունքի օբյեկտները, եթե այդպիսի օգտագործումն անհրաժեշտ է Կայքը բնականոն շահագործելու համար:

2.3. Սույն Պայմանագրով Պատվիրատուի ակնկալած արդյունքին հասնելու համար անհրաժեշտ և Պատվիրատուին պատկանող հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտների՝ Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման շրջանակներում օգտագործելը չի համարվում այդպիսի օբյեկտների նկատմամբ իրավունքների Կատարողին փոխանցում: Կատարողը երաշխավորում է, որ Պատվիրատուին պատկանող հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտները որևէ կերպ չի փոխանցի այլ անձանց, բացառությամբ, երբ այդպիսի փոխանցման իրավունքը Կպտարողին կտրվի Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:

2.4. Կատարողը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար օգտագործված հեղինակային և հարակից իրավունքների բոլոր այն օբյեկտների օգտագործման իրավաչափության համար, որոնք վերջինիս չեն տրամադրվել Պատվիրատուի կողմից:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

3.1.2. Ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, պահանջել Կատարողից տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն,

3.1.3. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

3.1.4. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս,

3.1.5. Կայքի լրամշակված տարբերակի վերաբերյալ հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրվանից 1 (մեկ) ամսվա ընթացքում առանց քանակային սահմանափակումների գրավոր դիմելու Կատարողին՝ Ծառայությունների մատուցման արդյունքի օգտագործման հետ կապված համապատասխան խորհրդատվություն ստանալու ակնկալիքով,

3.1.6. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

3.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1. Սույն Պայմանագրի կատարման համար Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը, ելակետային տվյալները,

3.2.2. Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 3 (երեք) օրվա ընթացքում, պատասխանել Կատարողի՝ սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցմանը վերաբերող գրավոր հարցումներին, տրամադրել դրանցով պահանջվող տեղեկատվությունը և այլ տվյալները (գաղտնաբառեր, մուտքանուններ և այլ),

3.2.3. Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լինելու դեպքում Կատարողի ներկայացուցիչներին տրամադրել Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն,

3.2.4. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին,

3.2.5. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

3.3. **Կատարողն իրավունք ունի՝**

3.3.1. Ողջամտության սահմաններում Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, այդ թվում, բայց չսահմանափակվելով, Կայքին հասանելիությունը,

3.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

3.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել մատուցված Ծառայությունների դիմաց՝ սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

3.4. **Կատարողը պարտավոր է՝**

3.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,

3.4.2. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Ծառայությունների մատուցումը կարգավորող կիրառելի նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան,

3.4.3. Ծառայությունները մատուցել այնպես, որպեսզի Պատվիրատուն հասնի սույն Պայմանագրի կնքմամբ հետապնդած և սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված արդյունքին,

3.4.4. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, սույն Պայմանագրի 3.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,

3.4.5. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

3.4.6. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում գործել բարեխղճորեն՝ ի շահ Պատվիրատուի,

3.4.7. Հանձնման-ընդունման ակտի ստորագրման հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկացնել Ծառայությունների արդյունքի շահագործման պահանջների և կանոնների, այդ պահանջները և կանոնները չպահպանելու հետևանքների վերաբերյալ,

3.4.8. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման արդյունքում հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները,

3.4.9. Սույն Պայմանագրի 3.1.5 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան դիմումը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման արդյունքի օգտագործման համար անհրաժեշտ խորհրդատվությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրի գինը կազմում է 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Սույն կետով սահմանված Պայմանագրի գինը ներառում է Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը՝ այդ թվում երրորդ անձանցից հեղինակային կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման թույլտվությունների ձեռքբերման ծախսերը:

4.2. Պատվիրատուն սույն Պայմանագրի գինը վճարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

4.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-ապրանքագիր:

5.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում՝ հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

5.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ և/կամ շեղումներ, Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել հանձնման-ընդունման ակտի չհաստատման հիմնավորում՝ նշելով հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ:

5.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

5.5. Հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է փոխանցում Կայքի շահագործման համար անհրաժեշտ գաղտնաբառերը և այլ ելեկտրային տվյալները: Կայքի լրամշակված հատված հասանելիությունն ապահովող գաղտնաբառերը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավորվում է փոփոխել տվյալ գաղտնաբառերը: Գաղտնաբառերի փոփոխման համար սահմանված երկու աշխատանքային օրյա ժամկետի սպառվելուց հետո Կատարողը չի կրի որևէ պատասխանատվություն կայքէջում տեղադրված տեղեկատվությանն այն անձանց կողմից հասանելիություն ունենալու դեպքում, ովքեր չեն հանդիսանում սույն Պայմանագրի կողմ, եթե այդպիսի հասանելիության արդյունքում ոչնչացվել, արգելափակվել, փոփոխվել, պատճենվել է փակ տեղեկատվություն, խախտվել է Կայքի աշխատանքը, փոփոխվել է նրա որոշ կամ բոլոր էջերի բովանդակությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար սույն Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3. Սույն Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:

6.4. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար սույն Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

6.5. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

6.7. Կատարողը պարտավոր է անհատույց վերացնել բոլոր այն թերությունները, որոնց արդյունքում Պատվիրատուն չի կարողանում շահագործել Կայքը, և որոնք կապված են սույն Պայմանագրի շրջանակներում Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից օգտագործված կոդերի, ալգորիթմների և այլնի հետ: Պատվիրատուն Կատարողին այդպիսի թերությունների վերացման պահանջ կարող է ներկայացնել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց 2 (երկու) տարիների ընթացքում:

6.8. Կատարողն իրավունք ունի սույն Պայմանագիր 6.7. կետով սահմանված ժամկետում չվերացնելու նույն կետով նախատեսված թերությունները, եթե այդպիսիք առաջ են եկել Կայքը երրորդ անձի կողմից վերամշակելու/լրամշակելու արդյունքում, բացառությամբ եթե այդպիսի վերամշակումը/լրամշակումը կատարել է Կատարողը՝ Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված այլ պայմանագրի շրջանակներում:

7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

7.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել

կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

8.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթեր, գիտատեխնիկական, տեխնոլոգիական, արտադրական, ֆինանսա-տնտեսական կամ այլ տեղեկատվություն, տեղեկատվության պաշտպանության և նույնականացման/իսկության միջոցներ, մուտքանուն, գաղտնաբառ, Պատվիրատուի կամ Կատարողի կոնտրագենտների մասին տեղեկություններ, ապրանքների, ծառայությունների, հետազոտությունների արդյունքներ և այլն), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), համարվում է գաղտնի տեղեկատվություն (այսուհետ՝ Գաղտնի տեղեկատվություն):

8.2. Ցանկացած տեղեկատվություն, որը հասանելի է դարձել Պատվիրատուի համակարգչային ռեսուրսներին Կատարողին մուտքի տրամադրման արդյունքում նույնպես համարվում է Գաղտնի տեղեկատվություն և չի կարող տրամադրվել երրորդ անձանց:

8.3. Սույն Պայմանագրի շրջանակներում Գաղտնի է համարվում նաև այն տեղեկատվությունը, որը ստացվել է Գաղտնի տեղեկատվությունից քաղման, դրա մշակման, ամփոփման և վերլուծության միջոցով:

8.4. Կատարողը և Պատվիրատուն պարտավորվում են չբացահայտել և/կամ որևէ երրորդ անձանց չփոխանցել որևէ Գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված առանձին դեպքերի և/կամ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության, ինչպես նաև չօգտագործել այդպիսի Գաղտնի տեղեկատվությունը սույն Պայմանագրի նպատակներին հակասող նպատակների համար և տարածել իրենց աշխատողների շրջանում միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ կլինի սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար:

8.5. Կատարողը պարտավորվում է՝

8.5.1. Ապահովել իրեն տրամադրված տեղեկատվության և դրա պահպանման ու մշակման միջոցների անվտանգությունը,

8.5.2. Անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին, որպիսիք են.

8.5.2.1. Իրեն տրամադրված տեղեկատվական ակտիվների վնասում, կորուստ, փոփոխում, ոչնչացում, հափշտակում,

8.5.2.2. Իրեն տրամադրված գաղտնաբառերի, էլեկտրոնային բանալիների կորուստ,

8.5.2.3. Գաղտնի տեղեկատվության արտահոսք,

8.5.2.4. Իրեն վերապահված լիազորությունների տիրապետում այլ անձանց կողմից:

8.5.3. Պայմանագրի ավարտին Պատվիրատուին հանձնել իր տնօրինության տակ գտնվող՝ Պատվիրատուին պատկանող տեղեկատվությունը և տեղեկատվական ակտիվները,

8.5.4. Չօգտագործել Պատվիրատուի տեղեկատվական ակտիվների անվտանգության մեջ իրեն հայտնի դարձած խոցելիությունները, այլ հակառակը՝ դրանց մասին տեղեկացնել Պատվիրատուին:

8.6. Կողմերը պարտավորվում են իրենց աշխատողներին արգելել Գաղտնի տեղեկատվության օգտագործումը սույն Պայմանագրով չնախատեսված նպատակներով:

8.7. Կողմերը պարտավորվում են Գաղտնի տեղեկատվության բացահայտման վերաբերյալ փաստերի հայտնաբերման կամ կասկածների առաջացման դեպքում հնարավորինս արագ, բայց ոչ ուշ, քան 3 (երեք) օրում միմյանց ծանուցել այդ մասին և անհապաղ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ Գաղտնի տեղեկատվության հետագա բացահայտումը կանխելու ուղղությամբ:

8.8. Երրորդ անձանց Գաղտնի տեղեկատվությունը բացահայտելու կամ փոխանցելու ներքո հասկացվում է Կողմերի (նրանց պաշտոնատար անձանց, աշխատողների, գործընկերների) կողմից երրորդ անձանց ցանկացած դիտավորյալ կամ անզգուշաբար ծանոթացումը այդպիսի Գաղտնի տվյալներին՝ լինեն դրանք ֆիզիկական, թե իրավաբանական անձինք, ցանկացած ձևով, ներառյալ բանավոր և գրավոր, կամ տրամադրված փաստաթղթերի բնօրինակներին կամ դրանց պատճեններին կամ քաղվածքներին, ներառյալ ընդհանրացումներին ծանոթացնելու և այլ ձևերով:

8.9. Կողմերը Գաղտնի տեղեկատվությունը փոխանակում են էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի փոստային սերվերի օգտագործմամբ՝ արխիվացնող ծրագրի կոդավորման մեխանիզմի կիրառմամբ: Կողմերի կողմից օգտագործվող ծածկագիրը տրամադրվում է Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից:

8.10. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև դրանից հետո 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

9.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

9.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

9.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.5. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Սույն Պայմանագրի շրջանակներում Գաղտնի տեղեկատվության փոխանակման նպատակով կիրառելի են սույն Պայմանագրի 8.9 կետով սահմանված Գաղտնի տեղեկատվության փոխանակման միջոցները:

9.6. Կողմերն արձանագրում են, որ էլեկտրոնային փոստի միջոցով փոխանցվող տեղեկատվությունն ունի թղթային եղանակով փոխանցվող տեղեկատվությանը հավասարազոր իրավաբանական ուժ: Էլեկտրոնային փոստի միջոցով փոխանցվող փաստաթղթերը համարվում են ստացված ուղարկման օրը, իսկ ժամկետները, եթե այդպիսիք կան, սկսում են հոսել ստացման հաջորդ օրվանից:

9.7. Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.8. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

9.9. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9.10. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, վերջինս պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ համապատասխան փոփոխությունից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

9.11. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.12. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.13. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000
Էլ.Փոստ՝ pavel.stepanyan@1tv.am

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան Վրացական 4-րդ նրբ. 7-10
ՀՎՀՀ՝ 00031518
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220000129423-000
Էլ.Փոստ՝ inga@helix.am

Ա.Մխիթարյան
Տնօրեն

Հավելված 1
2019թ.-ի օգոստոսի 19-ին կնքված
N 19/08/08 պայմանագրի

Տեխնիկական առաջադրանք-բնութագիր	
Լրամշակման աշխատանքների ցանկ	1. Կայքի նոր դիզայնի մշակում, 2. Կայքի ներքին կառավարման համակարգի վերամշակում, 3. Նորություններ բաժնի վերամշակում՝ նոր բաժինների ավելացում, հին բաժինների փոփոխություն, 4. Խմբագիրներ բաժնի ավելացում, 5. Հեղինակային բաժնի ավելացում, 6. Հարցազրույցներ բաժնի ավելացում, 7. Կայքի ներքին էջերի՝ ակտիվ էջերի ավելացում, 8. Թերթվող նորություններ (slider) բաժնի ավելացում, 9. Կայքի արտաքին տեսքի ծրագրավորում, 10. Կայքի HTML էջակապի ինտեգրում, 11. Որոնման համակարգի ինտեգրում՝ նախկին նյութերում որոնում կատարելու հնարավորությամբ, 12. Կայքում էջերի շարժի (scrolling) և էջակալման (paging) գործառույթների վերամշակում:
Լրամշակված Կայքի հնարավորությունները (արտաքին տեսք, էջերի գործառույթներ և այլ)	I. Կայքում պետք է հնարավոր լինի տեղադրել տեղեկատվության հետևյալ տեսակները. ▪ Ուղիղ եթեր (Live stream) youtube.com կայքէջի հղմամբ, ▪ Տեսանյութեր youtube.com կայքէջի հղմամբ, ▪ Տեքստ, ▪ Լուսանկարներ: II. Գլխավոր (Home) բաժնի հնարավորություններ. 1. Բաժիններ թվով 10 հատ (Hide-ի հնարավորությամբ), 1.1. Քաղաքական, 1.2. Տնտեսական, 1.3. Աշխարհ, 1.4. Հասարակություն, 1.5. Արցախ, 1.6. Մշակույթ, 1.7. Սպորտ, 1.8. Հաղորդումներ, 1.9. Իրավունք, 1.10. Տարածաշրջան: 2. Կայքի գլխավոր բաժիններում թվով 5 հատ ենթաբաժինների բացում (Hide-ի հնարավորությամբ), 3. Ուղիղ եթեր (Live stream), 4. Գլխավոր լուրերի բաժին՝ 4 լուրի տեղադրման հնարավորությամբ (Կայքի խմբագրի ընտրությամբ բաժնի նյութերի փոփոխության հնարավորություն, մինչև 5 վայրկյան տևողությամբ ավտոմատ թերթվող լուրեր (Auto Slide show)), 5. Օրվա լրահոս բաժին (բոլոր լուրերի ուղղահայաց դասավորությամբ՝ scroll), 6. Օրվա կարևոր բաժին՝ խմբագրի ընտրությամբ բաժնի նյութերի փոփոխության հնարավորությամբ,

	7. Հեղինակային, խմբագրական բաժին, 8. Ամենադիտված բաժին՝ օրացույցով ժամանակահատվածը ընտրելու ձևաչափով, 9. Անոնսային բաներ, 10. Որոնում ամսաթվով, 11. Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության սոցիալական ցանցերի հղման բաժին (Facebook, Youtube, Instagram, Twitter, Telegram): Կայքի գլխավոր էջում պետք է հնարավոր լինի ըստ անհրաժեշտության տեղաշարժել 3-րդ և 4-րդ կետերը. ուղիղ եթերի առկայության դեպքում հիմնական մասում պետք է երևա ուղիղ եթերը, իսկ ուղիղ եթերի բացակայության դեպքում պետք է երևան օրվա գլխավոր լուրերը: III. Տեղադրված նյութը պետք է ունենա հետևյալ արտաքին տեսքը. 1. Կիսում, հավանում (Share, Like) դեպի սոցիալական ցանցեր՝ Facebook Twitter, 2. Տեքստում հղումների հնարավորություն /հղումների քանակը չպետք է սահմանափակ լինի/, 3. Տեսանյութերի հնարավորություն, 4. Լուսանկարների թերթման հնարավորություն: IV. Ներքին կառավարման համակարգի խմբագրական բաժինը պետք է ունենա հետևյալ հնարավորությունները. 1. Նախքան նյութի հրապարակումը նյութը պետք է ունենա աշխատանքային մի քանի փուլ, Նյութ տեղադրող -> Draft -> Խմբագիր -> Հրապարակում/Hide-ի հնարավորություն/ -> Սրբագրող -> Հրապարակում, 2. Հնարավորություն տալ խմբագիրներին արդեն իսկ հրապարակված տեքստերում կատարել փոփոխություններ /Edit history-hide/, 3. Նյութերի հրապարակման պլանավորում ըստ ժամերի, 4. Նյութի բաժինը նշելու գործիք, 5. Բանալի բառերի ավելացում, 6. Տեքստում հղումներ ավելացնել:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000
Էլ.Փոստ՝ pavel.stepanyan@1tv.am

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան Վրացական 4-րդ նրբ. 7-10
ՀՎՀՀ՝ 00031518
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220000129423-000
Էլ.Փոստ՝ inga@helix.am

Ա.Մխիթարյան
Տնօրեն